

ԹԵՄԻՍ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՀՐԷԱԿԱՆ ՈՂՋԱԿԻԶՈՒՄԻ
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ
ՍԸՆՈՄԱ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կառուցման Աշխատանքներու Վերահսկիչ՝ Հոգշ. Տ. Պարեպ Ծ. Կրդ. Երեցեան որպէս ներկայացուցիչը Առաջնորդ Սրբապան Հօր եւ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը եւ Հիւսիսային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդը՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեան Կիրակի, Մարտ 29ի կէսօրէ ետք ժամը 3-5 մասնակցեցան Սրնոմա Պեպական Համալսարանի Ըրնա եւ Արթըր Սալմ Հրէական Ողջակիպումի եւ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած յուշարձանի բացման պաշտօնական արարողութեան, որ կը գտնուի Ռահնէթ Փարքի մէջ, Գալիֆորնիա: Ներկայ էր նաեւ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան, որ աղօթք մատուց 1915 թուի Հայոց Ցեղասպանութեան զոհ գացած 1.5 միլիոն հայորդիներու հոգիներուն համար: Իսկ Խաչիկ Ճինկիրեան օրուան պատշաճ երգերով հանդէս եկաւ:

Յուշարձանը առաջին անգամ առաջարկուած էր Ընկերային Գիտութիւններու Դպրոցի տնօրէն եւ դասախօս-մասնագէտը Հրէական Հրկիպումի եւ Ցեղասպանութեան Ուսմանց՝ Դոկտ. Իլէյն Լիպըրի կողմէ: Քրիստին Դաւիթեան, Նախագահուհին Հիւսիսային Ծոցի Շրջանի Հայութեան, մեծ բաժին ունեցաւ տեղւոյն հայ համայնքի կողմէ վօրակցութիւն ապահովելով: Բացի Հայոց Ցեղասպանութիւնը խորհրդանշելէ, Յուշարձանը կ'ընդգրկէ Բնիկ Ամերիկացիները, Հրէական Հրկիպումի զոհերը, ինչպէս նաեւ Գամպոտիայի եւ Ռուանդայի զոհերը:

Յուշարձանը կը ներփակէ 460 աղիւսներ, որոնց վրայ արձանագրուած են անունները եւ համայնքները, որոնք կրած եւ դիմացած են Ցեղասպանութեան ցաւերուն: Սակայն աղիւսներուն աւելի քան 40 առ հարիւր տոկոսը նուիրուած են Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Բացման արարողութեան ընթացքին Հայր Պարեպ հանդիսաւոր կերպով ընթերցեց Առաջնորդ Սրբապան Հօր ողջոյնի խօսքն ու պատգամը: